“And I saw a new heaven and a new earth: for the first heaven and the first earth were passed away.” Rev. 21:1. The fire that consumes the wicked purifies the earth. Every trace of the curse is swept away. No eternally burning hell will keep before the ransomed the fearful consequences of sin. One reminder alone remains: our Redeemer will ever bear the marks of His crucifixion. Upon His wounded head, His hands and feet, are the only traces of the cruel work that sin has wrought.

«Եվ տեսայ նոր երկինք և նոր երկիր, որովհետև առաջի երկինքը և երկիրն անցաւ»: Հայտնություն ԻԱ.1: Կրակը լափում է ամբարիշտներին. երկիրը մաքրվում է: Մաքրվում են անեծքի վերջին հետքերը: Դժողքի հավետենական կրակը չէ, որ պետք է մեզ զգոն պահի: Նման բան չկա: Մեղքի միակ հիշեցումը խաչելության հետքերն են որ հավերժ մնալու են Փրկչի մարմնի վրա: Նրա վիրավոր գլուխը, խոցված ձեռքերն ու ոտքերը մեղքի զարհուրելի հետեվանքների վերջին եվ միակ հիշեցումն են լինելու:

“O Tower of the flock, the strong hold of the daughter of Zion, unto thee shall it come, even the first dominion.” Micah 4:8. The kingdom forfeited by sin, Christ has regained, and the redeemed are to possess it with Him. “The righteous shall inherit the land, and dwell therein for ever.” Ps. 37:29. A fear of making the saints’ inheritance seem too material has led many to spiritualize away the very truths which lead us to look upon the new earth as our home. Christ assured His disciples that He went to prepare mansions for them. Those who accept the teachings of God’s Word will not be wholly ignorant concerning the heavenly abode. And yet the apostle Paul declares, “Eye hath not seen, nor ear heard, neither have entered into the heart of man, the things which God hath prepared for them that love Him.” 1 Cor. 2:9. Human language is inadequate to describe the reward of the righteous. It will be known only to those who behold it. No finite mind can comprehend the glory of the Paradise of God.

«Ով հոտի աշտարակ, Սիօնի աղջկան բլուրը, մինչև քեզ է գալու և հասնելու առաջի իշխանութիւնը:» Միքիա Դ.8: Քրիստոսը ետ է նվաճել մեղքի իշխանության տակ գտնվող արքայությունը: Այժմ Նա՛ պիտի թագավորի այնտեղ՝ փրկվածների հետ միասին: «Արդարները երկիրը կ՛ժառանգեն, և յաւիտեան կ՛բնակուին նորանում»: Սաղքոս ԼԷ.29: Սրբերի ժառանգությանը չափազանց նյութական տեսք տալու վախից՝ շատերը, անգամ ամենապարզ ճշմարտությունների մեջ փորձում են այլաբանություն տեսնել: Օրինակ նրանք ոչ մի կերպ չեն ընդունում, որ մեր տունը դարձյալ երկիրն է լինելու, բայց նոր, մաքրված երկիրը: Քրիստոսը հավաստացնում էր առաքյալներին, որ գնում է նրանց համար ապարանքներ պատրաստելու: Իհարկե Աստծո Խոսքին ծանոթ մարդը գիտե երկնային օթեվանի գոյության մասին: Սակայն չ՞է որ Պողոս առաքյանն ինքն է ասում. «Ինչ որ աչք չ՛տեսավ և ականջ չ՛լսեց և մարդի սիրտ չ՛ընկաւ, այն պատրաստեց Աստուած իրան սիրողների համար»: Ա Կորնթացիս Բ.9: Մարդկային լեզուն չափազանց աղքատ է՝ նկարագրելու համար արդարների վարձքը: Մահկանացու միտքն անկարող է ըմբռնել Աստծո Դրախտի փառքը:

In the Bible the inheritance of the saved is called a country. (Heb. 11:14-16.) There the great Shepherd leads His flock to fountains of living waters. The tree of life yields its fruit every month, and the leaves of the tree are for the service of the nations. here are ever-flowing streams, clear as crystal, and beside them waving trees cast their shadows upon the paths prepared for the ransomed of the Lord. There the wide-spreading plains swell into hills of beauty, and the mountains of God rear their lofty summits. On those peaceful plains, beside those living streams, God’s people, so long pilgrims and wanderers, shall find a home.

Փրկյալների ժառանգությունը Աստվածաշունչը «Հայրենիք» է կոչում: Եբրայեցիս ԺԱ 14-16: Այնտեղ Հովիվն իր հոտը դեպի կենաց ջրերի աղբյուրներն է առաջնորդում: Կենաց ծառն ամիսը մեկ պտուղ է տալիս, իսկ տերևներն ազգերին են ծառայում: Հավերժական գետեր կան այնտեղ՝ բյուրեղապակու նման զուլալ ջրով, որոնց ափերին օրորվող ծառերի ստվերներն ընկնում են Աստծո փրկյալների համար գծված կածանների վրա: Այնտեղ լայնատարած դաշտերը դառնում են չքնաղ բլուրներ, վեր են խոյանում Աստծո լեռների սիգապանծ գագաթները: Այստեղ, այս խաղաղ դաշտերում, այս կենաց ջրերի կողքին վերջապես իր տունը կգտնի այդքան երկար թափառած Աստծո ժողովուրդը:

**Henrik Pipoyan, Freelance Translator**
19/1 Vagharshyan street, # 15, Yerevan, 375012, Armenia
**Tel./Fax:** +374 (1) 22-35-60, **E-mail:** Henrik@Pipoyan.com
**Online Resume:** www.pipoyan.com/trans/